

ԼԻԼԻԹ ՂԱԶԱՆՉՅԱՆ

ՀՀ փաստաբանական պալատի անդամ,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի դոկտորանտ

ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Սույն գիտական հոդվածում հեղինակը իրավաբանական մտքի պատմության նյութերի հետազոտության հիման վրա բացահայտում է անձի իրավական դրության հասկացության և իրավաբանական կառուցվածքի հիմնարար սոցիալ-իրավական նշանակությունն ու առանձնահատկությունները անձի իրավական դրության ձևավորման գործընթացում: Մասնավորապես, ներկայացվում են անձի իրավական դրության, դրա կառուցվածքային տարրերի վերաբերյալ նշանավոր իրավագետների կարծիքները պետության և իրավունքի տեսության համատեքստում:

Հիմնարարը- անձի իրավական դրություն, անձի իրավունքներ և ազատություններ, օրինական շահեր, պարտականություններ, քաղաքացիություն, իրավասուբյեկտություն, ժողովրդավարական պետություն:

Արդի պետության և իրավունքի տեսության, որպես անընդհատ զարգացող գիտության համար, անկյունաքարային նշանակություն ունի «անձի իրավական դրություն» հասկացության ուսումնասիրությունը: Անձի իրավական դրությունը հանդիսանում է ժամանակակից ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կառուցման և զարգացման կարևոր նախադրյալ:

Հայտնի է, որ պետության և իրավունքի տեսությունը հիմնարար, ընդհանրական, իրավաբանական, մեթոդաբանական գիտություն է, որն ընդգրկում է աքսիոլոգիան, դոգմատիկական պետության և իրավունքի փիլիսոփայությունն ու սոցիոլոգիան: Որպես հիմնարար գիտություն, պետության և իրավունքի տեսությունը զարգանում է իր բովանդակությամբ, առարկայով և սուբյեկտների շրջանակով, ինչպես նաև՝ համալրվում է նոր մասնավոր տեսություններով, որոնցից է նաև անձի իրավական դրության տեսությունը: Այնուհաստի, որ արդի իրավաբանական գործընթացները, համաշխարհայնացումը, միջազգային իրավունքի ներգործությունն իրենց ուրույն ազդեցությունն են թողնում անձի իրավական դրության տեսության զարգացման վրա՝ դրանով առաջացնելով անձի իրավական դրության նոր հիմնահարցեր: Հայտնի է, որ ժամանակակից պետության և իրավունքի տեսությունը, ինչպես նաև՝ վերջինիս ամբողջության մասը կազմող «անձի իրավական դրություն» տեսությունը օժտված են մարդասիրական բնույթով, ծառայում են մարդու՝ որպես բարձրագույն արժեքի, իրավունքների, ազատությունների և օրինական շահերի հաստատմանն ու պարտականությունների սահմանների հստակեցմանը: Ավելին, իրավագետ-

ները պետության և իրավունքի տեսությունում բազմիցս մատնանշել են, որ պետությունը պարտավոր է երաշխավորել (պաշտպանել և պահպանել) մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, լուծել անձի սոցիալ-իրավական խնդիրները: Այնուհաստի, որ սոցիալական արդարության, մարդու իրավունքների, ազատությունների հավասարության և գերակայության գաղափարները դառնում են վճռորոշ ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության կառուցման համար:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ պետության և իրավունքի տեսության կառուցվածքում անձի իրավական դրությունը հանդիսանում է համախմբող, կարծրացնող հասկացություն, որը միահյուսում և համակարգում է «անձ-հասարակություն-պետություն» փոխհարաբերությունները: Միևնույն ժամանակ, անձի իրավական դրությունը խարսխված է պետության և իրավունքի տեսության և պատմության վրա, և ներառում է անձի՝ որպես իրավունքի սուբյեկտի, սոցիալական, իրավական հատկանիշների ուսումնասիրությունը, իրավական դրության ծագման և զարգացման օրինաչափությունները, ինչպես նաև՝ էվոլյուցիոն զարգացման հեռանկարը և այլ հիմնահարցեր: Այնուհաստի, որ այն նպաստում է անձին որոշելու իր տեղն ու դերը տվյալ հասարակությունում, պետությունում, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում օգտվել տարբեր բարիքներից, ունենալ ստեղծագործական մասնակցություն նոր հասարակական հարաբերությունների, հասարակական և քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում հասարակության արտադրական ուժերի զարգացման մեջ:

www.journal.lawinstitute.am

Հավելենք, որ անձի իրավական դրության բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրության համար անհրաժեշտ է բացահայտել «անձ» հասկացության էությունն ու դրսևորման առանձնահատկությունները: Այսպես, իրավաբանական գրականությունում անձը մի դեպքում՝ բնութագրվում է որպես «ինքնագիտակցության միասնության առկայության դեպքում բանականությամբ, կամքով և ինքնատիպ բնավորությամբ օժտված եզակի էակի և նրա ինքնուրույնության ներքին բնորոշում»: Մյուս դեպքերում՝ «անձ» հասկացությունը ներկայանում է երկու ասպեկտներով՝

1) գիտակցված գործունեության, ավելի կոնկրետ՝ իրավահավասարության սուբյեկտի, մարդկային անհատի տեսքով («անձ» լայն իմաստով),

2) որպես անձին կոնկրետ հասարակության և պետության անդամ որակող՝ սոցիալական կարևոր հատկանիշների հիմնարար համակարգ: Թեև «անձ» (մարդն ամբողջությամբ) և «անձնավորություն» (անձի սոցիալ-հոգեբանական պատկերը) եզրույթները տերմինաբանորեն տարբերվում են, այդ հասկացությունները հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ: Ավելին, անձի հատուկ գենոտիպային բնույթը տարբերվում է նրանով, որ անձ ոչ թե ծնվում, այլ դառնում են: Միևնույն ժամանակ, գիտնականներից շատերը հստակեցնելով մարդու դուալիստական բնույթը, որը զգում է ոչ միայն սեփական կենսաբանական կառուցվածքի, այլև հասարակության և պետության ներգործությանը՝ չեն նույնացնում «անձ» և «մարդ» հասկացությունները:

Հետաքրքրություն է առաջացնում իրավաբանական գրականությունում վերջին տասնամյակում զարգացում ստացած անձի կենդանական աշխարհի հետ համեմատելու միտումը: Ընդ որում, մարդը հանդիսանալով կենսաբանական աշխարհի ներկայացուցիչ՝ օժտված է որոշակի հատկանիշներով, որոնք իրեն նմանեցնում, իսկ երբեմն նաև նույնականացնում են գիլոլոգիական աշխարհի այլ ներկայացուցիչների հետ: Դրանով է պայամնավորված կենդանիների օրգանների, հյուսվածքների և բջիջների փոխապատվաստումը մարդուն: Մարդու նմանությունը կենսաբանական աշխարհի այլ օբյեկտների հետ հիմք հանդիսացավ բիոնիկայի գիտության ծագման և զարգացման համար, որի հիմնական խնդիրն է բույսերի և կենդանիների կառուցվածքային առանձնահատկությունների հետազոտությունն ու այդ հատկությունների կիրառումը տեխնիկայում: Այսպես, սրտի բարդ վիրահատությունները հնարավոր դարձան հիպոտեթների մեթոդի կիրառման շնորհիվ, որի գաղափարը ծագեց որոշ միջատների և կրծողների ձմռան ամիսներին խորը քնի վիճակի ուսումնասիրման արդյունքում: Միևնույն ժամանակ, ժամանակակից իրավաբանական գրականությունում կարևորվում է նաև անձի, որպես կենսաբանական տեսակի, տարբեր

փորձերից պաշտպանության հիմնախնդիրը, առաջնային տեղ հատկացնելով բիոէթիկայի կյանքի վերարտադրության՝ արհեստական բեղմնավորման, փոխնակ մայրության, կլոնավորման, գենետիկայի և գենային ինժեներիայի հետ կապված հարցերին: Հարկ է նշել, որ իրավաբաններից շատերը վերոնշյալ ոլորտի իրավական կարգավորումները անվանում են մարդու իրավունքների չորրորդ սերնդի կարգավորման հարցեր:

Դրա հետ մեկտեղ, վերաբժևորման և լուրջ վերլուծության անհրաժեշտություն ունի արդի իրավաբանական գրականությունում անձի բիոսոցիալական էության վերաբերյալ հայեցակարգը՝ մասնավորապես, նվիրված միջոյուղային, միջդիսցիպլինար հետազոտություններին: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ անձի իրավական դրության հիմնախնդրի վերլուծության արդյունքում եկել ենք այն համոզման, որ անձը ձևավորվում է ինչպես մարդու կենսաբանական, բնածին, այնպես էլ՝ սոցիալական միջավայրի ազդեցության հետևանքով ձեռքբերված առանձնահատկությունների ներգործությամբ: Օրինակ՝ իրավունակությունն անձի մոտ ծագում է ծննդյան պահից, ինչը նշանակում է, որ նա ներգրավվում է որոշակի իրավահարաբերություններում՝ որպես իրավունքի սուբյեկտ և, հետևաբար, կարելի է խոսել մարդու՝ որպես «իրավունքում անձի» մասին: Այստեղից էլ բխում է որոշ հեղինակների կարծիքն այն մասին, որ «անձ» կարելի է ծնվել: Ավելին, որոշ գիտնականներ ճանաչում են հասարակությունում անձի տարբեր մակարդակների գոյությունը՝ բարձր զարգացվածությամբ անձանցից մինչև անկում (դեգրադացիա) ապրածները:

Դժվար է համաձայնել մարդու այդպիսի՝ առաջին հայացքից անմարդկային դասակարգման հետ, քանի որ յուրաքանչյուր մարդ օժտված է բնական, անօտարելի իրավունքներով, ազատություններով, արժանապատվությամբ և արժանի է իր հանդեպ որպես անձի, վերաբերմունքի, ինչպես հասարակության անդամների, այնպես էլ՝ պետության կողմից ընդհանուր առմամբ:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ «անձ» հասկացությունը՝ որպես անձի իրավական դրության օղակ, հանդիսանում է իրավահարաբերություններում իրացվող, մարդու՝ ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ սոցիալ-իրավաբանական և հոգեբանական հատկությունների համակցություն: Հավելենք, որ մարդու վրա անմիջական ներգործություն է ունենում իր գործունեությունը և այն իրականացնելու եղանակները: Ավելին, անձի գործունեությունը կապված է նաև կոնկրետ պետության և հասարակության զարգացման աստիճանի հետ: Այսինքն, անձի գործունեությունը վերափոխվում է նրա հիմնարար, արմատական բնորոշ գծերի, սկզբունքների, հատկանիշների սահմանման չափորոշիչ: Իրավաբանական գրականությունում բա-

ցակայուն է միասնական կարծիք տվյալ հասկացությունների հարաբերակցության վերաբերյալ: Որոշ իրավաբան-գիտնականներ դիտարկում են տվյալ եզրույթները որպես հոմանիշներ, մյուսներն էլ՝ ընդհակառակը, հակադրում են դրանք՝ տարբերակելով դրանց ակտիվ և ռեակտիվ (հակազդող) առանձնահատկությունները, վարքագծի բնույթն ու հետադիմությունը շրջակա միջավայրի վրա: Համընդհանուր ճանաչում ստացած բնորոշման համաձայն՝ վարքագիծը մարդու, որպես կենդանի էակի, ներքնաշխարհից բխող շարժական ակտիվությունն է, որը ներառում է նաև անշարժությունը և հանդիսանում է մարդկային օրգանիզմի և շրջակա միջավայրի բարձրագույն մակարդակի փոխազդեցության գործադիր օղակ: Այնուհանդերձ, անձի վարքագիծն արտացոլում է տվյալ անձի բնավորության ներքին առանձնահատկությունները, ինչպես նաև՝ նրա վարքագծի սոցիալ-հասարակական պատճառները և բարոյական նորմերի նկատմամբ վերջինիս վերաբերմունքը: Հետևաբար, եթե անձի «գործողությունները» գնահատվում են որպես նպատակաուղղված և գիտակցված ակտիվ, իսկ որոշ դեպքերում նաև պասիվ «գործունեություն»՝ ուղղված անձի նպատակների և շահերի նվաճմանը, ապա նրա կառուցվածքը մարմնավորում է նպատակներին հասնելու միջոցները, եղանակները, պայմանները: «Վարք» կամ որոշ դեպքերում կիրառվող «վարքագիծ» հասկացությունն իր հերթին հանդիսանում է արգելքների՝ որոշ դեպքերում գիտակցված և կամային համակցություն: Հետևաբար, ժամանակակից իրավաբանական գրականությունում «վարքի» չափանիշ է համարվում ցանկացած գործունեություն, իսկ «գործունեության» չափանիշ՝ անձի սոցիալապես գիտակցված վարքի, վարքագծի ակտը (գործողությունը կամ անգործությունը): Այնուամենայնիվ, արդի իրավաբանական գրականությունում վիճարկվում է «վարքագիծ» եզրույթի կիրառման հարցը անձի իրավական դրության դիտարկման ժամանակ: Այնուհաստի, որ անձի իրական, կոնկրետ վարքագիծը հանդիսանում է իրավունքի մարմնավորումն ու իրացումը, քանի որ անձի գործողությունները հանդիսանում են ժամանակակից ժողովրդավարական, իրավական պետության միջուկը, հիմքը: Միևնույն ժամանակ, մարդու՝ իրավահարաբերության սուբյեկտի, գիտակցված, կամային գործողությունները, իրավական վարքը, այսինքն՝ իրավանորմերը, հանդիսանում են անձի պատշաճ վարքի (վարքագծի) սահմաններ: Այսպես, Ի.Ա. Պոկրովսկու կարծիքով՝ անձի անհատականության, յուրօրինակության պահպանման կարևորությունը, հանդիսանում է պետության պարտականությունը: Ավելին, միանման պահանջումներով հասարակությունում, պետությունում անձը կորցնում է իր անհատականությունը, իսկ իրավունքը ճանաչում է միայն մինիմալ պահանջումները: Հետևաբար, ան-

ձի ցանկացած շահ, պահանջումը, նույնիսկ անենատարօրինակը, պետք է պաշտպանվի պետության և օրենքի կողմից: Մեր կարծիքով, արդի ժողովրդավարական հասարակությունը ազատ անձանց միություն է, որոնք ձգտում են իրականացնել իրենց իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը: Նույնիսկ այն դեպքում, երբ առկա է շեղում անձի՝ միջինում ընդունված անհատականությունից, և անձը չի ունենալ պետության, հասարակության և այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, ապա անհատականությունը պետք է պահպանվի տվյալ պետության օրենսդրությամբ: Տվյալ դեպքում, օրենքը և պետությունը իրենց պաշտպանության և ակտիվ պահպանման հովանու ներքո են վերցնում ոչ միայն անձի տիպիկ անհատականությունը, այլև որոշ դեպքերում տարօրինակ թվացող անձի անհատականության դրսևորումը: Հետևաբար, անձի ցանկացած անհատականության դրսևորում գոյության և ճանաչման իրավունք ունի, քանի որ դա հասարակության բարոյական գիտակցության զարգացման արդյունք է, ինչպես նաև մարդու իրավունքների ոլորտի միջազգային-իրավական փաստաթղթերի պահանջ:

Ինչ վերաբերում է «անձի իրավական դրություն» եզրույթին, ապա պետք է փաստել, որ այն ծագել է լատիներեն՝ «դրություն, կարգավիճակ, վիճակ, դիրք» բառից: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է մարդուն, անձին կամ քաղաքացուն: Ավելին, պետության և իրավունքի տեսություն գիտությունում, ինչպես նաև ճյուղային իրավաբանական գիտություններում նույնացվում են «անձի իրավական դրություն» և «անձի իրավական կարգավիճակ» հասկացությունները: Չնայած այն հանգամանքին, որ «իրավական դրություն» և «իրավական կարգավիճակ» եզրույթները ծագումնաբանորեն հոմանիշներ են, այնուամենայնիվ, իրավաբանական գրականության մեջ որոշ իրավագետներ առաջարկում են տարբերակել այդ տերմինները, քանի որ վերջիններս գտնում են, որ *իրավական կարգավիճակը, իրավական դրության միջուկն է*: Այնուամենայնիվ, միջազգային իրավական ակտերը, սահմանադրությունը, ընթացիկ օրենսդրությունը, ինչպես նաև դատական նախադեպը չեն տարբերակում այդ եզրույթները՝ դրանք կիրառելով որպես հոմանիշներ:

Համընդհանուր ճանաչում ստացած սահմանման համաձայն՝ անձի իրավական դրությունը նրա փաստացի վիճակն է տվյալ հասարակության և պետության մեջ, որն ավելի կամ պակաս ամբողջությամբ (նայած պետության կառավարման ձևից և քաղաքական ռեժիմից) իր արտացոլումն է գտնում իրավունքի մեջ:

«Իրավական դրություն» հասկացությունը համեմատաբար նոր է պետության և իրավունքի տեսություն գիտության մեջ: Մինչեղավորակալական շրջանից մինչև 20-րդ դարի 60-ական թթ. այն նույ-

նացվում էր անձի իրավասուբյեկտության հետ¹¹ : Միայն իրավական մտքի սրընթաց զարգացման ժամանակ (1970-1980թթ.) իրավական դրություն հասկացությունը ձևավորվեց որպես իրավագիտության առանցքային հիմնախնդիր, ստացավ լայն մշակում և ամրագրվեց օրենսդրության մեջ: Տեսաբաններից ոմանք գտնում էին, որ անձի իրավական դրության (կարգավիճակի) հիմնական տարրն անձի հիմնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների ամբողջությունն է, իսկ մնացած այլ տարրերը (օրինական շահերը, իրավասուբյեկտությունը, սկզբունքները) հանդիսանում են լրացուցիչ տարրեր¹² :

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ անձի իրավական դրության սոցիալ-իրավական որակական առանձնահատկություններն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է քննարկել «անձի իրավական դրություն» հասկացությունը լայն իմաստով: Հետևաբար, անհրաժեշտ է այնպիսի կատեգորիայի ներմուծում և քննարկում, որը կարող է ընդգրկել անձի իրավական դրությունը բնութագրող սոցիալ-իրավական երևույթների ամբողջությունը: Ավելին, երբ սահմանում ենք «անձի իրավական դրություն» հասկացությունը, ապա անհրաժեշտ է բացահայտել դրա իրավաբանական կառուցվածքը: Ընդհանուր առմամբ, «իրավաբանական կառուցվածք» հասկացությունը սահմանվում է որպես «կառուցվածք», «կազմ», քանի որ դրանում արտացոլվում են ուսումնասիրվող խնդրի կառուցվածքային-համակարգային ամբողջությունը: Ակնհայտ է, որ իրավաբան-գիտնականների մեծ բանակը դիտարկում է անձի իրավական դրությունը (կարգավիճակը) որպես բարդ երևույթ, որը իրավունքներից և պարտականություններից գատ բաղկացած է այլ բազմաբովանդակ տարրերից: Այսպես՝ Ա.Ի. Լեպյոշկինն անձի իրավունքների և պարտականությունների հետ մեկտեղ դիտարկում է դրանց երաշխիքները, որպես անձի իրավական դրության տարր (ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.)¹³ : Բ.Վ.Շետինինն, իր հերթին, ավելացնում է քաղաքացիությունը¹⁴, Լ.Գ.Վոևոդինը՝ իրավասուբյեկտությունը և իրավական սկզբունքները¹⁵, իսկ Վ.Մ. Գորշենևն ու Ն.Ի. Մատուզովը՝ քաղաքացու ընդհանուր (իրավաբանական) պատասխանատվությունը պետության և հասարակության առջև¹⁶ (ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.): Ուշագրավ է Մ.Վ. Ստրոգովիչի դիրքորոշումը, համաձայն որի, անձի իրավական դրության կառուցվածքային տարրեր են հանդիսանում իրավաբանական պարտականությունը, իրավական երաշխիքները և իրավաբանական պատասխանատվությունը (ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.)¹⁷ : Տեղին է հիշել նաև Վ.Ա. Պատյուլինի դիրքորոշումը, համաձայն որի, անձի իրավական դրության (կարգավիճակի) հիմունքներն են՝ անձի հիմնական իրավունքներն ու պարտականությունները, քաղաքացիությունը, ընդհանուր իրավունակությունը,

սահմանադրությամբ ամրագրված իրավահավասարության սկզբունքը (ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.)¹⁸ : Չ.Կ. Ալեքսանդրովան առաջարկում է ներմուծել «քաղաքացու իրավական համակարգ» եզրույթը, որը կարող է լիարժեքորեն բնութագրել անձի իրավական դրության էությունը¹⁹ : Ակնհայտ է, որ իրավագետների «անձի իրավական դրության (կարգավիճակի)» վերաբերյալ սահմանումները կարելի է շարունակել անվերջ, սակայն դրանք միմյանցից տարբերվում են լոկ վերը թվարկված տարրերի տարբեր համակցություններով: Հետևաբար, անհրաժեշտ է դիտարկել «անձի իրավական դրությունը» լայն և նեղ իմաստներով, որոնք փոխհարաբերվում են որպես ընդհանուրն ու մասնավորը (չնայած «իրավական դրություն» և «իրավական կարգավիճակ» եզրույթների ծագումնաբանական նույնությանը)²⁰ : Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ արդի պետության և իրավունքի տեսությունը՝ որպես գիտություն, ներկայացնում է անձի իրավական դրության (կարգավիճակի) հետևյալ կառուցվածքային տարրերը (հիմունքները).

- 1) մարդու հիմնական իրավունքների, ազատությունների ու պարտականությունների ամբողջությունը,
- 2) քաղաքացիությունը,
- 3) իրավասուբյեկտությունը,
- 4) անձի օրինական շահերը,
- 5) իրավաբանական պատասխանատվությունը,
- 6) իրավական սկզբունքները, որոնց վրա հիմնված է անձի իրավական դրությունը (կարգավիճակը):

Ավելին, այն իրավական երևույթները, փաստերը, որոնց օգնությամբ պետությունը ամրագրում է անձի իրավական դրությունը հասարակական հարաբերությունների համակարգում, նույնպես հանդիսանում են անձի իրավական դրության տարրեր: Միևնույն ժամանակ, պետք է փաստել, որ անձի իրավական դրության բովանդակությունում վերջինիս տարրերի շարքին չեն կարող դասվել անձի իրավունքների, պարտականությունների և օրինական շահերի ընդհանուր երաշխիքները (տնտեսական, սոցիալական, քաղաքական, գաղափարախոսական և այլն), ինչպես նաև՝ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների գործունեությունը՝ ուղղված անձի իրավունքների, պարտականությունների և օրինական շահերի իրացմանը²¹ : Ընդամին, անձի իրավական դրության տարր չեն կարող հանդիսանալ նաև անձի սոցիալական պատասխանատվությունը, նրա օրենսդրորեն չամրագրված սոցիալական շահերն ու հնարավորությունները, ինչպես նաև՝ անձին բազմակողմանի բնութագրող ոչ իրավական այլ երևույթներ: Հարկ է նշել, որ իրավաբանական գրականությունում լայն տարածում է ստացել այն տեսակետը,

որի համաձայն՝ անձի իրավական կարգավիճակի տարր են հանդիսանում *իրավաբանական երաշխիքները, ավելի կոնկրետ՝ անձի իրավական կարգավիճակի իրավաբանական երաշխիքները*։ Ըստ Ն.Վ. Վիտրուկի՝ իրավաբանական երաշխիքները, հանդիսանալով իրավական կարգավիճակի կառուցվածքային տարր, անմիջականորեն ապահովում են անձի իրավաբանական կարգավիճակի (նրա հիմնական տարրերի իրավաբանական ազատությունների, պարտականությունների և օրինական շահերի) իրացումն ու պաշտպանությունը։ Ն.Վ. Վիտրուկը՝ որպես իրավական դրության տարր, դիտարկում է նաև *կոնկրետ իրավաբանական պատասխանատվությունը (ռետրոսպեկտիվ, հետահայաց պատասխանատվություն)*։ Ակնհայտ է, որ հեղինակը հիմք է ընդունում այն թեզը, որ իրավաբանական պատասխանատվությունը (վարչական, կարգապահական պատասխանատվությունը), նյութական պատասխանատվությունը և պետական հարկադրանքի այլ միջոցները կազմում են *անձի իրավական դրության իրավաբանական երաշխիքների տարրերն ու տեսակները (ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.)*²²։ Եվ հետևաբար, միայն այդ դեպքում նրանք կարող են ընդգրկվել անձի իրավական դրության (կարգավիճակի) կառուցվածքի մեջ։ Ըստ Ն.Բ.Մատուզովի՝ անձի իրավական դրության կառուցվածքային տարր են հանդիսանում *իրավահարաբերությունները* կամ ընդհանուր իրավահարաբերությունները *(ընդգծումը մերն է՝ Լ.Ղ.)*²³։ Մենք համամիտ չեն նշված կարծիքի հետ, քանի որ իրավական կապերը և իրավահարաբերությունները չեն գտնվում նույն հարթության սանդղակի վրա անձի իրավունքների, ազատությունների, պարտականությունների հետ, հետևաբար, ճիշտ չէ դասել անձի իրավական դրության տարրերի շարքին։

Կարևոր է նշել, որ Ն. Վ. Վիտրուկը, առանձնացնելով «անձի իրավական կարգավիճակը» հասկացությունը «անձի իրավական դրությունից» հասկացությունից և այլ իրավական երևույթներից, հատկացնում է անձի իրավական կարգավիճակին կենտրոնական դեր՝ օժտելով իրավական պարտականությունների և օրինական շահերի նկատմամբ ստորադաս բնույթով²⁴։ Ընդ որում, իրավագետը դիտարկում է իրավաբանական պատասխանատվությունը ստատիկ վիճակում, այլ ոչ թե անընդհատ զարգացման ընթացքում, քանի որ այդ պարագայում, իրավաբանական պատասխանատվությունը՝ որպես իրավախախտի վարքագիծ, հանդիսանում է խախտված իրավունքների վերականգման գործընթացի մի մաս։

Դժվար է համաձայնել վերոնշյալ դիրքորոշման հետ, քանի որ իրավաբանական պատասխանատվության հիմքը իրավախախտումն է, իսկ իրավախախտի համար իրավաբանական պատասխանատվություն նշանակում է նրա նկատմամբ իրավունքի նորմերի սանկցիայով նախատեսված պա-

տասխանատվության որոշակի միջոցի կիրառումը։ Ավելին՝ իրավաբանական պատասխանատվությունը բարդ սոցիալ-իրավական երևույթ է, որը ներառում է նվազագույնը երկու կողմ՝ պետություն և իրավախախտող։ Իր բնույթով իրավաբանական պատասխանատվությունը այն մի ամբողջ գործընթաց է, որը սկսվում է իրավախախտմամբ և ավարտվում այդ իրավախախտման համար վրա հասած պատասխանատվությամբ, հետևաբար, այն չի կարող գտնվել մշտական ստատիկ վիճակում։

Հայտնի է, որ իրավաբանական պատասխանատվության դեպքում իրավախախտողի և պետություն միջև ծավալվում է իրավապահպան հարաբերություն, որում պետությունը, ի դեմս իր իրավասու մարմինների, հանդես է գալիս որպես իրավագոր կողմ, իսկ իրավախախտողը՝ պարտավոր։ Ընդ որում, և՛ իրավագոր, և՛ պարտավոր կողմերը գործում են օրենքի շրջանակներում և իրավաբանական պատասխանատվության իրացումը իրականացվում է իրավունքի իրավական նորմերի կոնկրետ սանկցիաների հիման վրա, որոնք պատասխանատվություն են նախատեսում հատկապես տվյալ իրավախախտման համար։ Իրավաբանական երաշխիքները վերաբերում են պետական մարմինների և հիմնարկների գործունեությանը, որը հատուկ ուղղված է օրինականության և իրավակարգի ամրապնդմանը, իրավախախտումների կանխարգելմանն ու խափանմանը։ Այն իրականացնում են օրենսդիր, գործադիր, դատական մարմինների և պետության ամբողջ համակարգի կողմից, ներառյալ այնպիսի ինստիտուտի, ինչպիսին է մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) ինստիտուտը։

Անձի իրավական կարգավիճակի անբաժանելի տարրն են կազմում նաև այն *իրավաբանորեն ամրագրված սկզբունքները*, որոնց վրա խարսխված է մարդու իրավական դրությունը։ Դրանք արտացոլում են անձի և պետության միջև արմատական հարաբերությունները՝ ելնելով հասարակության մեջ նրա ունեցած դիրքից։ Խոսքը վերաբերում է իրավական դրության (կարգավիճակի) այնպիսի հիմնարար սկզբունքներին, ինչպիսիք են՝ *իրավունքների, ազատությունների և պարտականությունների համընդհանրությունն ու հավասարությունը (իրավահավասարություն), դրանց անօտարելիությունն ու երաշխավորվածությունը*։ Այդ սկզբունքներն իրենց ամրագրումն են ստացել ՀՀ Հիմնական օրենքում, քանի որ պայմանավորում են մեր երկրում ընդունված մարդու իրավունքների հայեցակարգի բովանդակությունը։

Վերոշարադրյալից ակնհայտ է, որ անձի իրավական դրությունը բարդ սոցիալական, իրավական նշանակություն ունեցող երևույթ է, որը տարբեր պատմական ժամանակաշրջաններում և հասարակական-տնտեսական ֆորմացիաներում ուներ

տարրեր դրսևորումներ: Բավական է համեմատել ստրկատիրական, ֆեոդալական, բուրժուական համայնակարգերը, հասարակության պայտմական տիպերը, որպեսզի համոզվենք դրանում²⁵: Ուստի, օրինաչափ է, որ անձի իրավական դրությունը և նրա կառուցվածքային տարրերը ուսումնասիրվում են ինչպես իրավունքի ընդհանուր տեսության, այն-

պես էլ ճյուղային և հատուկ իրավաբանական գիտությունների կողմից (սահմանադրական իրավունք, քրեական իրավունք, քրեագիտություն և այլն):

¹ Մանրամասն տե՛ս, Алексеев С.С. Общая теория права. Уч. 2-е изд. М., Проспект, 2008; Витрук Н.В. Теория права и государства. Проблема учебного курса// Право и жизнь.1992. N 3. С. 172-183; Голунский С.А., Строгович М.С. Теория государства и права. М., 1940; Денисов А.И. Теория государства и права.М., 1972; Денисов А.И., Ириченко М.Г. Советское государственное право. М., 1958. Комаров С.А. Общая теория государства и права, М., 1995; Недбайло П.Е. Основы теории государства и права. Киев.1958; Папуканис Е.Б. Общая теория права и марксизм. М.,1924; Теория государства и права: Уч.для юр.вузов/ Под ред. М.А. Аржанова. М.,1948; Теория государства и права/ Под ред. Н.И. Матузова, А.В. Малько. М., Юристъ. 2004; Общая теория права и государства/ Под ред. В.В. Лазарева. М., 1996; Спиридонов Л.И. Теория государства и права.М., Норма. 2011; Сырых В.М.Теория государства и права.М., 2003; Bachelard G. La formation de l'esprit scientifique. Paris.Vrin.1977; Friedmann W. Théorie générale du droit. L.G.D.J.,1965;Grawitz M. Méthodes des sciences sociales. Paris. Dalloz. 2012; Hebermas J. La technique et la science comme l'idéologie.Paris.Gallimard. 1973; Hindess B., Imaginary Presuppositions of Democracy//Economy and Society, 20:2.

² Энциклопедический словарь.Т. XVII.Изд. Брокгауз Ф.А., Ефран И.А., СПб. 1896.С. 868; Տե՛ս նաև Ануфриев Е.А. Социальный статус и активность личности. М., 1984; Архипов С.И. Субъект права: теоретическое исследование. СПб, изд-во Юрид. центр Пресс, 2004; Крет О.В. Правовая реальность: онтолого-гносеологический анализ. Автореф.дисс....канд. филос.наук.Тамбов, 2007.

³ Տե՛ս, Ананьев Б.Г. Человек как предмет познания. Л., изд. ЛГУ,1968; Байтин Р.С. О логико-гносеологической и юридической природе правового состояния//Вопросы теории государства и права: перестройка и актуальные проблемы теории социалистического государства и права. Сб. науч. трудов. Вып.9. Саратов. 1991. Леонтьев А.Н. Деятельность, сознание. Личность //Избранные психологические произведения: В 2-х т.Т.2. М., 1983. С.196-197; 2002. С. 115-116; Русалов М.В. Биологические основы индивидуально-психологических различий. М., 1979. С. 15-17; Рубинштейн С.Л. Бытие и сознание. Человек и мир. Санкт-Петербург. СПб., 2003. С. 271-274.

⁴ Տե՛ս, Комаров С.А. Советское общенародное государство и личность: политико-правовые аспекты. Красноярск. Изд. Красноярск. ун-та, 1986, С. 65; Матузов Н.И. Личность. Право. Демократия. Теоретические проблемы субъективного права. Саратов. изд. Сарат. ун-та, 1972. С. 68-70; Барзилова Ю.В. Правовой статус личности в свете современных реалий//Новая правовая жизнь. 2005. N3. С.31.

⁵ Տե՛ս, Психологический словарь/ Под ред. В.П. Зинченко, Б.Г. Мещерякова. М., Норма.1996.С.263-264.

⁶ Մանրամասն տե՛ս, Прусаков А.Д. Действие и бездействие как формы юридически значимого поведения. Автореф. дисс....канд юрид. наук. Саратов. 2008; Рубинштейн С.Л. Бытие и сознание. 3-е изд.пер.и доп. М., Норма. 2005.

⁷ Տե՛ս, Atias C., L'épistémologie juridique.Dalloz.Paris.2002.P.96; Terré F. Introduction générale au droit. 6^{ème} édition.2003. P. 25-27; Troper M. Entre science et dogmatique, la vie étroite del neutralite. *Théorie du droit et science*. Paris. Leviathan.1994. P. 56.

⁸ Տե՛ս, Покровский И.А. Основные проблемы гражданского права. 3-е изд., М., Статут. 2001. С.130-132; Шагиева Р.В. Концепция правовой действительности в современном обществе. Автореф. дисс....канд. юрид. наук. М., 2006:

⁹ Մանրամասն տե՛ս Малько В.В. Понятие правового статуса личности в СССР// Управление и право.1978. Вып.4.Ч.1. С.58-62; Недбайло П.Е. Основы теории государства и права. Киев, 1959; Общая теория прав человека/ Отв. ред. Е.А.Лукашева.М., Норма.1996:

¹⁰ Տե՛ս, Այվազյան Վ.Ն. Մարդու իրավունքներ, 2-րդ լրացված հրատարակ., Եր. Տղրան Մեծ, 2007, էջ 43:

¹¹ Տե՛ս, Коркунов Н. М. Лекции по общей теории права. 4-е издание.Санкт-Петербург. СПб., 1897. С. 96; Шершеневич Г.Ф. Общая теория права. М., Вып. 1. 1910. С. 300.

¹² Տե՛ս, Витрук Н.В. Основы теории правового положения личности в социалистическом обществе.М., Наука. 1979. С. 24-25; Марченко М.Н., Теория государства и права.М., МГУ. 2007. С. 591-602.

¹³ Տե՛ս, Лепешкин А.И. Правовое положение советских граждан. М., Наука. 1966. С. 3-11.

¹⁴ Տե՛ս, Щегинин Б.В. Гражданин и социалистическое государство//Советское государство и право. 1975. N 2. С.4-5.

¹⁵ Տե՛ս, Воеводин Л.Д. Содержание правового положения личности в науке советского государственного права //Советское государство и право.1965. N 2. С. 42-50.

¹⁶ Տե՛ս, Матузов Н.И. Личность. Право. Демократия: Теоретические проблемы субъективного права. Саратов, 1972. С. 189-206.

¹⁷ Տե՛ս, Строгович М.С. Вопросы теории прав личности//Философия и современность. М., 1976. С. 33-36.
¹⁸ Տե՛ս, Паполин В. А. Государство и личность в СССР (правовые аспекты взаимоотношений) М., 1974. С. 231.
¹⁹ Տե՛ս, Александрова З. К. Теоретические вопросы правового статуса граждан зарубежных социалистических стран Европы: Автореф. дисс... канд. юрид. наук. Свердловск, 1975. С. 5-7.
²⁰ Նմանատիպ եզրահանգման են գալիս ճյուղային իրավաբանական գիտությունների վառ ներկայացուցիչները, տե՛ս, Александрова З. К. Теоретические вопросы правового статуса граждан зарубежных социалистических стран Европы: Автореф. дисс...канд. юрид.наук. Свердловск, 1975. С. 5-7; Новоселов В. И. Правовое положение граждан в советском государственном управлении. Саратов, изд.Сарат.ун-та.1976. С.36.
²¹ Մանրամասն տե՛ս Витрук Н.В. Статус члена общественной организации: задачи и направления исследований//Вопросы теории общественных организаций. М., 1977; Новоселов В.И. Некоторые вопросы соотношения правового статуса граждан и статуса членов общественных организаций// Вопросы теории общественных организаций. С. 69-73.
²² Տե՛ս, Витрук Н.В. Основы теории правового положения личности в социалистическом обществе.М., Наука. 1979. С. 30-34; Նույնի՛ր՝ О категориях правового положения личности в социалистическом обществе//Советское государство и право. 1974. N12. С. 11.
²³ Տե՛ս, Магузов Н.И. Личность. Права. Демократия: Теоретические проблемы субъективного права.Саратов, 1972. С. 196.
²⁴ Տե՛ս, Витрук Н.В. Общая теория правового положения личности. М., 2009. С. 12.
²⁵ Մանրամասն տե՛ս Бадирян Г.М. Права личности в истории (материалы из истории правовой мысли и законодательства Армении), Ереван, 2005. С. 12-21; Графский В.Г. Всеобщая история права и государства/ Уч. для ВУЗ-ов, Норма, М., 2007. С. 51-96; Сафарян Г.Г. Проблемы правотворческой деятельности в Третьей Армянской Республике: Дисс. на соискание уч. ст. доктора юрид. наук, Ереван, 2002. С. 37-39.

Լիլիտ Կազանչյան

Старший научный сотрудник института философии, социологии и права НАН РА, член палаты адвокатов Республики Армения, кандидат юридических наук, докторант института философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Понятие и юридическая конструкция правового положения личности

В данной научной статье на основе изучения материалов из истории политико-правовой мысли раскрываются фундаментальное, социально-юридическое значение и особенности юридической конструкции правового положения личности в формировании правового положения личности. В частности, представлены разнообразные трактовки и классификации правового положения личности, ее структурных элементов известными правоведами в контексте теории государства и права.

Ключевые слова: правовое положение личности, права и свободы личности, законные интересы, обязанности, гражданство, правосубъектность, демократическое государство.

Lilit Kazanchian

Senior Researcher of The Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA, PhD in Law, Member of the Chamber of the Advocates of the Republic of Armenia, Doctoral candidate of The Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA,

SUMMARY

Concept and legal structure of the legal status of the individual

In the given scientific article, the author based on the study of materials from the history of political and legal thought, reveals the fundamental, social and legal significance and peculiarities of the legal construction of the legal status of the individual. In particular, the article considers a variety of interpretations and classifications of the legal status of the individual, its structural elements by well-known lawyers in the context of the theory of state and law.

Keywords: the legal status of the individual, the rights and freedoms of the individual, legitimate interests, duties, citizenship, legal personality, democratic state.